

եղբայրներուն՝ Հաւատոյ Տարածման Սրբազան Ժողովի Ս. Հ. Ե. Կարդինալներուն նամակէն, եւ մեր յարգելի Յովհաննէս եղբորմէ՝ Միջագետքի Արքեպիսկոպոսէն, որ այժմ բովոյ կը վերադառնայ: Եղբայրութեանդ եւ Ազգիդ համայն կաթողիկէներուն կը շնորհենք Առաքելական Օրհնութիւնը մեր Քահանայապետական սրտին ամբողջ սիրովը:

Տուեալ ի Հոռոմ, առ Դրանն Ս. Մարիամ Աւագ Եկեղեցւոյն, ընդ մատանեաւ ձկնորսի ի 6 աւուր Օգոստոսի յամի 1667, յառաջին ամի Քահանայապետութեան մերոյ» (13):

Ս. Պապը իր այս նամակով չէր ընդդէմանար հայ եկեղեցւոյ ծիսական սովորութիւններուն, այլ կը յանձնարարէր ջրախառն գինի գործածել Ս. Պատարազի ընթացքին, նկատի առնելով այս բանիս վարդապետական նշանակութիւնը, եւ արեւելեան ու արեւմտեան բոլոր եկեղեցիներուն սովորութիւնը: Թէ Ս. Աթոռը ո՛րչափ նախանձախընդիր էր հայ ծէսին պահպանումին, զայդ ցոյց կու տայ Հաւատոյ Տարածման Սրբազան Ժողովին 3 Ապրիլ 1669 թուակիր յայտարարութիւնը Լեհաստանի Հայոց առնչութեամբ: Հոն, ի մէջ այլոց կը կարդանք. «Որովհետեւ միացեալ հայոց ծէսը բազմիցս Առաքելական Աթոռին կողմէ վաւերացուցաւ եւ հաստատուեցաւ, Սրբազան Ժողովը պատուիրեց որ ոեւէ պատճառաւ փոփոխու-

(13) Archivio S. C. P. F. Asia 2. Armeni di Asia Vol. 222 fol. 139-140.